ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Ն19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

03.07.2015թ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77[1]-77[6] հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2015 թվականի հունվարի 19-ի N 6-Ա որոշումը՝

ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ալիկ Սահակյանի /հանձնաժողովի նախագահ/, ՀԳՄՏՍ գործունեության համակարգման բաժնի առաջին կարգի մասնագետ Արմեն Շահվերդյանի, հաշվապահական հաշվառման բաժնի պետ Արտավազդ Բեջանյանի, հողաշինության և հողօգտագործման բաժնի առաջատար մասնագետ Էդգար Հախվերդյանի, զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի առաջատար մասնագետ Ժիրայր Բասմաջյանի, ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Հախինյանի, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Նարեկ Սարգսյանի, կրթության բաժնի գլխավոր մասնագետ Անահիտ Բարոյանի, մշակույթի և սպորտի բաժնի առաջատար մասնագետ Միեր Մելիքյանի, բնապահպանության բաժնի պետ Արտակ Դեմիրչյանի և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Սամվել Խառատյանի կողմից իրականացվեց վարչական հսկողություն ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքում՝ ՏԻՄ-երի լիազորությունների, հողօգտագործման, առևտրի և ծառայությունների, քաղաքաշինության, ՔԿԱԳ, կրթության, մշակույթի, բնապահպանության և ընդերքօգտագործման ոլորտներում, ինչպես նաև համայնքային ենթակայության 1 նախադպրոցական ուսումնական հաստատությունում:

1. Վարչական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը կից հավելվածով ներկայացված՝ հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:
2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:
3. Նշումներ /համայնքի ղեկավարի առարկությունները վարչական հսկողության արդյունքների և վարչական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ/

_____

_____

_____

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Լոռու մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Շնող համայնքի ղեկավարին:

Ալիկ Սահակյան

Արմեն Շահվերդյան

Արտավազդ Բեջանյան

Էդգար Հախվերդյան

Ժիրայր Բասմաջյան

Գագիկ Հախինյան

Նարեկ Սարգսյան

Անահիտ Բարոյան

Միեր Մելիքյան

Սամվել Խառատյան

Արտակ Դեմիրչյան

Համայնքի ղեկավար՝
Հովիկ Սահակյան